
ԽԱՔԱՆԻ ՇԻՐՎԱՆԻՆ ՈՐՊԵՍ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՂ

ԱՐՄԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պարսից դասական գրականության մեջ ուղեգրության ժանրի սկզբնավորումը կապված է XI դ. նշանավոր բանաստեղծ և մտածող Նասիր-իսխրովի անվան հետ: Նրա «Սաֆար-նամեն» գրված է դարաշրջանի գրական ոճագեղագիտական նորմերին ոչ բնորոշ արձակով: Հուշագրական-ուղեգրական գրականության սկզբնադրած Նասիր-իսխրովի ավանդույթը շարունակում են պարսից միջնադարյան գրականության նշանավոր երկու բանաստեղծներ՝ Խաքանի Շիրվանին ու Նիզարի Քուհիսթանին, որոնց ուղեգրությունները, սակայն, ենթարկվելով դարի հրամայականին, գրվել են չափածո:

Բնութագրելով բանաստեղծի ստեղծագործական անցած ուղին՝ հայտնի արևելագետ Մ. Ջանդը Խաքանի Շիրվանիի քնարական բանաստեղծությունների ժողովածուի նախաբանում նշում է. «Շատ բանաստեղծներ ապրում են երկու կյանքով. մեկը՝ արտաքին, ֆիզիկական... երկրորդը՝ ներքին, լի հոգու անդադար այրմամբ, որն էլ նրանց իրական կյանքն է, կյանք-ստեղծագործությունը: Այդպիսի բանաստեղծներին ճանաչելու համար մեզ անհրաժեշտ են միմիայն նրանց ստեղծագործությունները, իսկ որպես որոշ տողերի պարզաբանում՝ երբեմն մի քանի կենսագրական դրվագներ: Այդպիսի բանաստեղծներին ընկալում ենք իրենց իսկ շնորհիվ, և այդ առումով նրանք հասու ու հասկանալի են: Բայց կան նաև այլ կարգի բանաստեղծներ: Վերջիններիս պոեզիայի ճշմարտությունը իրենց կյանքի մեջ է: Այստեղ, որպես բանաստեղծության հավելում, բավական չէ միայն կենսագրական փոքրիկ ակնարկը: Այստեղ ողջ կյանքը պոեզիայի մեկնաբանություն է, և, հակառակը, ամբողջ պոեզիան՝ կյանքի մեկնաբանություն: Այդպիսի բանաստեղծին ընկալելու համար միայն պոեզիան բավարար չէ, պետք է իմանալ նաև հեղինակի կյանքը: Եվ այդ առումով այդպիսի բանաստեղծները դժվար ընկալելի են: Դրանց թվին է պատկանում Խաքանի Շիրվանին, որի պոեզիան պետք է դիտել որպես սեփական կյանքի մեկնաբանություն, իսկ սեփական կյանքը՝ իր ողջ պոեզիայի իրական մեկնաբանում»¹:

Աֆգալ-ադ-դին Իբրահիմ իբն Ալի Խաքանի Շիրվանին, որն ավելի հայտնի է Խաքանի Շիրվանի անունով, Արևելքի մեծ բանաստեղծներից ու փիլիսոփաներից մեկն է: Նա ծնվել է 1120 թ. Շիրվանշահերի պետության մայրաքաղաք Շամախիում: Շատ հաճախ նրա անվանն ավելացնում են բեդիլ («հետևորդ») բառը՝ համարելով պարսկական պոեզիայի դասականներից մեկի՝ Սանայիի հետևորդ: Նրա կրթության և մտավոր զարգացման

¹ Хакани. Лирика. М., 1967, с. 6-7.

գործում մեծ դեր են ունեցել հորեղբայրը՝ նշանավոր գիտնական Օմար Քաֆադիինը, և հորեղբոր որդին՝ հանրագիտարանային գիտելիքների տեր, տաղանդավոր երաժիշտ Վադա-ադ-դին Օսմանը:

Ըստ ժամանակի գրական միջավայրում ընդունված ավանդույթի՝ երիտասարդ բանաստեղծը պետք է ընտրեր թախալուս (մականուն), և քանի որ Իբրահիմը հայտնի բանաստեղծ Սանայիի երկրպագուն էր և մեծապես տպավորված նրա «Չադիդաթ ալ-Չադայեդ» («Ճշմարտությունների այգի») ստեղծագործությունից, ընտրում է Չադայեդի («Ճշմարտություն որոնող») մականունը: Հորեղբոր մահից հետո նրան հովանավորում է Շիրվանշահերի «բանաստեղծների արքա» Աբու-ալա Գյանջևին՝ նրան օգնելով մուտք գործել պալատական բանաստեղծների շրջան: Այստեղ բանաստեղծը հրաժարվում է նախկին «Չադայեդի» գրական անունից և, ի պատիվ Խաքան տիտղոսը կրող Շիրվանշահի, ընդունում «Խաքանի» մականունը:

1150 թ. Մանուչեհիրը մահանում է, և գահ է բարձրանում Ախսիթան Առաջինը, որի գահակալության օրոք Խաքանիի բանաստեղծական հասունացած տաղանդը դրսևորվում է իր ողջ անկրկնելիությամբ ու խորքով: Նրա բանաստեղծություններն աչքի են ընկնում մեղեդայնությամբ, հնչեղությամբ, քնարականությամբ: Սակայն միջավայրի բերումով նրա ստեղծագործությունների խոհափիլիսոփայական երակը պարուրվում է բարդությամբ, բառախաղերով, դժվար հասկանալի ակնարկներով, որով ոճը երբեմն դառնում է մանվածապատ:

Պալատում տեղի ունեցող բանաստեղծական մրցամարտերում հաճախակի հաղթող Խաքանին աստիճանաբար «ծեռք է բերում» ոչ քիչ հակառակորդներ, որն ազդում է նաև բանաստեղծի հանդեպ շահի վերաբերմունքի վրա: Այդ պատճառով Խաքանիի կյանքը արքունիքում դառնում է անտանելի: Նա այլևս չի կարողանում ապրել պալատական բանաստեղծների, երեսպաշտության, տգիտության ու բանսարկության գաղջ մթնոլորտում: Հենց այս հանգամանքներն էլ դրդում են նրան հեռանալ Շիրվանից և գնալ Խորասան: Սակայն Ռեյ հասնելուց հետո տեղի կառավարիչը արգելում է հետագա ընթացքը, և նա հարկադրված վերադառնում է հայրենիք: Դրանից հետո Խաքանին շահից վերջապես ստանում է հաջ գնալու թույլտվություն և 1156 թ. մեկնում Մեքքա:

Մուսուլմանների այդ ուխտատեղին խոր հետք է թողնում Խաքանիի ստեղծագործական հետագա նկարագրի վրա: Նա շրջագայում է Առաջավոր Ասիայի մի քանի երկրներում, այցելում Արդեբիլ, Սպահան, Բաղդադ, Դամասկոս, Մոսուլ, Մեքքա և Մեդինա քաղաքներ: Մեքքա ուխտագնացությունը ամեն մի կրթված մահմեդականի՝ որպես հավատացյալի պարտքը կատարած լինելու գոհացումից բացի նոր երկրներ տեսնելու, ակնառու և հայտնի գիտնականների ու քաղաքական գործիչների հետ հանդիպելու, փիլիսոփայական և կրոնական թեմաներով գիտական բանավեճերի մասնակցելու հնարավորություն էր: Այդ քննարկումները հաճախ շարունակվում էին նաև ճամփորդության ընթացքում: Հաջի մեկ-երկու տարում մարդը կարողանում էր վերագնահատել սեփական կյանքի ուղին, գծագրել ապրելու և ստեղծագործական գործունեության հետագա ընթացքը: Հաջը

թարմ լիցք հաղորդեց նաև Խաքանիի ստեղծագործական կյանքին, և այդ պատճառով այն կարելի է բաժանել երկու փուլի՝ մինչև հաջը և հաջից հետո:

Խաքանիի ճանապարհորդության ստույգ երթուղին հայտնի չէ: Միայն կարող ենք նշել, որ նա, անցնելով Համադանով և Մոսուլով, հասնում է Բաղդադ, իսկ այնտեղից՝ Մեքքա: Իր ուղևորությունը բանաստեղծը նկարագրում է «Հավասսի-Մեքքա» բանաստեղծության մեջ: Մեքքայից նա մեկնում է Մեդինա, այցելում Մուհամմադի դամբարանը, որտեղ երգվում է գինի չխմել և ժուժկալ կյանք վարել: Այդ պատճառով հայրենիք վերադառնալուց հետո նա խուսափում է արքունիքից և այստեղ լինում է միայն մեծ հավաքույթների ու ընդունելությունների ժամանակ: Այդ ժամանակահատվածի ստեղծագործություններում բանաստեղծը, անտեսելով վտանգը, քննադատաբար է նկարագրում պալատական բարքերը և պատժից խուսափելու նպատակով 1157-58 թթ. փախչում է Դերբենդ, որտեղ նրան ընդունում են մեծ սիրով ու հարգանքով:

Դերբենդում Խաքանին ծանոթանում է տեղի մշակութային կյանքին, ինչպես նաև հին քաղաքին ու շրջակայքին: Դրանից հետո Շիրվանշահի պահանջով նա կրկին վերադառնում է Շամախի, որից հետո՝ 1160 թ., ուղևորվում է Խոյ, իսկ 1163-64 թթ., որպես Շիրվանշահի ներկայացուցիչ՝ Համադան: Այդ ընթացքում ևս իր ստեղծագործություններում սքողված ձևով դժգոհություն է հայտնում հովանավորի վերաբերմունքից, արքունիքի ճնշող մթնոլորտից: Խորասան հեռանալու փորձը ձախողվում է. նրան ձերբակալում և նետում են զնդան: Այստեղ նա գրում է «Հաբսիյե» («Բանտային եղերերգեր») շարքը, որը, մասնագետների կարծիքով, նրա ստեղծագործությունների ամենանշանավոր ու հետաքրքիր մասն է: Բանտից ազատվելուց հետո բանաստեղծը կարողանում է երկրորդ անգամ մեկնել Մեքքա:

1176 թ. Խաքանին արդեն Բաղդադում էր, որտեղից նա մեկնում է Մեքքա ու Մեդինա ու կրկին այցելում Մուհամմադի գերեզմանին: 1177 թ. Դիարբեքիրով հասնում է Թավրիզ, որտեղ ապրում է երկու տասնամյակ: Այդ ժամանակաշրջանը անց է կացնում քաղաքի գրադարաններում՝ զբաղվելով գիտական հետազոտություններով ու դասավանդմամբ, շարունակում է շրջագայությունները, այցելում սուրբ վայրեր: Բանաստեղծը ճանապարհորդում է Ատրպատականում, Իրաքում, Հայաստանում, երկու անգամ լինում է Սպահանում: Սակայն նրան այդպես էլ չի հաջողվում հասնել Խորասան, որին նա ձգտում էր ողջ կյանքի ընթացքում. հասնելով Ռեյ՝ հիվանդանում է և վերադառնում Թավրիզ, որտեղ և վախճանվում է 1199-ին:

Խաքանիի հարուստ ստեղծագործական ժառանգությունը հարյուրամյակների ընթացքում գրավել է թեզքերե (հավաքածու) կազմողների, պատմաբանների և այլ հետազոտողների ուշադրությունը: XIII դարի հեղինակ Մուհամմադ Օրֆին իր «Լոբաբ-ալ-Ալբաբ» ստեղծագործության մեջ ուշագրավ տեղեկություններ է հայտնում բանաստեղծի կենսագրության մասին: Ավելի ուշ Դովլաթշահ Սամարղանդին, Աբդուռահման Ջամին, Լոթֆալի Բեկ Ազերը և ուրիշներ բանաստեղծին բնութագրել են որպես գեղարվեստական խոսքի մեծ վարպետ, բանաստեղծ-փիլիսոփա, Արևելքի

բազում բանաստեղծների ուսուցիչ²: Խաքանիի խոսքարվեստի հիմնախնդիրները ուսումնասիրել են ռուս արևելագետներ Ն. Խանիկովը, Կ. Չալենանը, խորհրդային գիտնականներ Ա. Կրիմսկին, Կ. Չայկինը, Ս. Բոլդիրևը, Յ. Մառը, Ե. Բերտելսը, Օ. Վիլչևսկին և ուրիշներ³:

Ինչպես նշվեց, Խաքանին երկար ժամանակ Ախսիթան շահից հաջ մեկնելու թույլտվություն էր խնդրում: «Թոհֆաթ ալ-Էրաղեյն» («Երկու Իրաքների նվերը») ստեղծագործության մեջ (1156 թ.) նա գրում է, որ դեռևս երեք տարի առաջ երազում էր բարձրանալ Սավալան լեռան գագաթը⁴:

Խաքանիի բազմաթիվ ստեղծագործությունների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում «Թոհֆաթ ալ-Էրաղեյն» («Երկու Իրաքների նվերը») ստեղծագործությունը: Դա նրա ճանապարհորդությունը նկարագրող միակ ծավալուն պոեմն է: Վերնագիրը բացատրվում է ճանապարհորդության երթուղով: Շիրվանից Մեքքա ճանապարհին անցնում էր պարսկական և արաբական Իրաքներով:

Պոեմը ոճով ակնհայտորեն տարբերվում է Խաքանիի պերճախոս, խորհրդանիշներով, ակնարկներով խճողված մյուս ստեղծագործություններից և, ինչպես նշում է Ա. Կրիմսկին, «գրված է բավականին պարզ ձևով»⁵: Անդրադառնալով Խաքանիի զրելաոճի համար անսովոր այդ պարզությանը՝ Աբու-ալ-Քասիմ Ջարրեն «Իրանի գրականության ակնարկ» հոդվածում նշում է. «Այս պոեմը կառուցվածքով զգալիորեն ավելի պարզ ու հասկանալի է, որը, հավանաբար, անհրաժեշտ էր ընթերցողների ավելի լայն շերտերին դիմելու նպատակով»⁶:

Ա. Կրիմսկին պոեմը պայմանականորեն բաժանում է հինգ մասի՝ ա) աստվածային ներածություն, բ) կենսագրական հիշողություններ, գ) Համադանի, արաբական Իրաքի և հատկապես Բաղդադի պատկերում, դ) Մեքքայի և ե) Մեդինայի նկարագրություններ: Որպես Խաքանիի ինքնակենսագրություն՝ պոեմն ընդհանրապես գնահատված և ուսումնասիրված չէ, մինչդեռ հատկապես երկրորդ մասում կենսագրական բազմաթիվ տվյալներ պարունակող քնարական հատվածներ կան: Գեղարվեստական առումով ուշագրավ են բնության պատկերավոր նկարագրությունները, որոնք, հավանաբար, գրվել են ճանապարհորդության ընթացքում, սակայն ավարտուն տեսք են ստացել ուղևորությունից հետո, մանավանդ եթե նկատի ունենանք ժամանակի երթևեկության պայմանները: Հենց այս փաստը մեզ թույլ է տալիս երկը դիտելու ոչ միայն որպես ինքնակենսագրություն և ուղեգրություն, այլև հուշագրություն: Պոեմը ցուցադրում է հեղինակի սուր դիտողականությունն ու տարբեր բնագավառներում նրա գիտելիքների բազմակողմանիությունը: Ճանապարհորդության ընթացքում Խաքանին ծանոթանում է Իրանի, Իրաքի, Սիրիայի քաղաքներին ու բնակավայրերին: Բաղդադում նրան ընդունում է խալիֆ Մուհամմադ իբն Մուսթադզարը, ո-

² Տե՛ս Բзакулизде С. Д. Общественно-политические и философские взгляды Хагани Ширвани. Баку, 1962, էջ 10:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

⁴ Տե՛ս Крымский А. Е. Низами и его современники. Баку, 1981, էջ 409:

⁵ Նույն տեղում, էջ 411:

⁶ "Восток". Сборник второй. Литература Ирана X–XV вв. М.-Л., 1935, с. 60.

րը նրան առաջարկում է դաբիրի (քարտուղարի) պաշտոն, սակայն բանաստեղծը հրաժարվում է:

«Թոհֆաթ ալ-Էրաղեյնը» հետաքրքիր ու հարուստ բովանդակությամբ ստեղծագործություն է: Խաքանին խոսում պատկերավորությամբ ներկայացնում է տեսած վայրերը, քաղաքները, պատմում բանաստեղծների, պետական գործիչների հետ ունեցած հանդիպումների մասին, անդրադառնում իր կենսագրությանը, հասարակական-փիլիսոփայական խնդիրներին: Բանաստեղծի նկարագրությունները հաճախ միջարկվում են աշխարհում տիրող անազնվության ու անարդարության մասին մտորումներով: Նա ցավ է ապրում, որ բնության գեղեցկությունն ու առատությունը մարդկանց երջանկություն չեն բերում: Հատկապես նախանձի ու խաբեության վերաբերյալ նշում է. «Չկա ավելի մեծ թերություն, քան նախանձը»⁷, իսկ «խաբեությունը կործանում է անգամ առյուծի սիրտը»⁸: Այս ստեղծագործության մեջ արտացոլվել են նաև խաքանի փիլիսոփայական հայացքները: Բանաստեղծը բարձր է գնահատում գիտությունների նշանակությունը, որոնց շնորհիվ մարդիկ բացահայտում են բնության գաղտնիքները: Նա գրականությանը վերագրում է դաստիարակչական մեծ դեր, պնդում, որ ամեն մի բանաստեղծ պետք է նաև ուսուցիչ-դաստիարակ լինի:

Պոեմում բավական մեծ տեղ են զբաղեցնում նաև ազգականների, բարեկամների, ուսուցիչների, ընկերների ու հովանավորների մասին դրվագները: Հետաքրքիր է, որ հայրենիքը սիրող ու կարոտող բանաստեղծը ծննդավայրից հեռանալիս նշում է, որ ազատվում է չարի, մթության ու մեղքի քաղաքից և մեկնում է հեռավոր Իրաք: Մինչդեռ վերջինիս մասին նա միայն բարեբանական խոսք է ասում՝ այն պատկերելով դրական հատկանիշներով՝ որպես հիանալի կանաչ այգի, երկրային դրախտ, խաղաղության երկիր և մաքուր հող: Նա նշում է, որ այդ երկրում գողություններ չկան, և միայն գանձապահներն են գող⁹:

Ինչպես և պահանջում են ժանրի կանոնները, պոեմի սկզբում բանաստեղծը Ջամալ-ադ-դին Մոսուլի հետ զրույցի միջոցով պատմում է իր մասին ու ճանապարհորդության մեկնելու դրդապատճառը¹⁰: Ստեղծագործության մեջ մեծ տեղ է զբաղեցնում հասարակ մարդկանց նկատմամբ շահի, բարձրաստիճան պալատականների, պետական գործիչների ու հոգևորականների ունեցած անարդար վերաբերմունքի թեման: Ակնարկելով շահի տգետ լինելը՝ նշում է, որ «նարգիզն էլ գլուխ չունի, սակայն ոսկե թագ ունի»¹¹: Մեկ այլ դեպքում, նկարագրելով Ռեյ քաղաքի պետական ու դատական համակարգը, գրում է, որ «բոլոր պետական գործիչները հանցագործներ են, իսկ դատավորները անընդհատ կաշառք են վերցնում»¹²: Հոգևորականների մասին գրելիս նշում է, որ հասարակ ժողովրդին քարոզելով երկնային կյանքում ամեն ինչ ստանալու ակնկալիքով համեստ ապրել՝ իրենք իրենց չեն զրկում երկրային կյանքի ոչ մի բարիքից:

⁷ Տե՛ս էջ 231-1333 خاقانی شروانی، تحفه العراقيين، تهران،

⁸ Նույն տեղում, էջ 45:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 78:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 28:

¹¹ خاقانی شروانی، تحفه العراقيين، تهران، 1333، ص 20.

¹² Նույն տեղում, էջ 32:

Առաքյալի տեղում նստած,
Առաքյալների օրենքներն են խախտում,
Սարդկանց ունեցվածքին տիրելով
Բռնի վաղձ են խլում¹³:

بر جای پیمبران نشستہ
ناموس پیمبران شکسته
از چیز کسان نوا گرفته
اوقاف بغصب وا گرفته

Այնուամենայնիվ, որպես խորահավատ մահմեդական՝ մեծապես կարևորում էր կրոնական ծիսակարգը երկյուղածորեն պահպանելը: Այդ է վկայում այն հանգամանքը, որ բնութագրելով ճանապարհորդության ընթացքում այցելած քաղաքներից մեկի բնակիչներին, վերջիններիս նկարագրում հատկապես շեշտում է նրանց բժախնդիր կրոնապաշտությունը.

Ամեն մեկը՝ հետևորդ ճշմարտության ճանապարհի,
Ամեն մեկը՝ հենարան կրոնի բանակի,
Վարքովն իրենց՝ կրոնի դոյակը նորոգ պահող,
Իրենց շունչը՝ անհավատների բերդը քարկոծող¹⁴:

هر یک رصدی ره یقین را
هر یک مددی سپاه دین را
طیان سرای دین قلمشان
غضبان حصار کفر دم شان

Մի մեծ հատված նվիրված է թշնամության ու թշնամիների խնդրին: Պոեմի առանձին մասերի քնարական շեղումներում նա մտաբերում է պային, հյուսն հորը, խոհարարի դուստր մորը, բժիշկ հորեղբորը և այլ մտերիմների:

Ստեղծագործությունը ուշագրավ է նաև այն առումով, որ սկսվում է ոչ չափածո հատվածով, որն այդ շրջանի պարսկական գրականության գեղարվեստական արձակի հազվագյուտ նմուշ է¹⁵:

Ինչպես նշեցինք, շահի պալատից բանաստեղծի առժամանակ հեռանալը նոր լիցք է հաղորդում նրա ստեղծագործությանը: Գրելով այս հիանալի պոեմը՝ նա բացում է իր հոգին, խորապես գիտակցում պալատում ապրելու ու ստեղծագործելու անհեռանկարայնությունը: Պոեմի հիմնական բովանդակությունը իշխանության և ֆեոդալների ամենաթողության քննադատությունն է, մարդկային մտքի ու ազատության փառաբանումը, աշխատանքի, գիտության ու լուսավորության հանդեպ բանաստեղծի ունեցած սիրո արտահայտությունը: Պոեմի էջերում նա դատապարտում է սոցիալական անհավասարությունը. ըստ նրա՝ հարստությունը չի կարող մարդկանց երջանկություն բերել, իսկ ֆեոդալական համակարգի պայմաններում առերևույթ երջանկություն է բերում միմիայն հասարակության մի փոքր մասին: Միաժամանակ անթաքույց է բանաստեղծի սերը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ¹⁶:

1156 թ. ճանապարհորդությունը ոգեշնչում է բանաստեղծին: Բացի այս պոեմից՝ նա գրում է նաև մի քանի փոքրածավալ երկեր: Դրանցից է, օրինակ, «Մեդային» քասիդը, որը գրել է այն ժամանակ, երբ իրենց ճամփորդական քարավանը կանգ էր առել Սասանյանների հին մայրաքաղաքի ավերակների մոտ: Քանդված և ավերված պալատների տեսքը հեղինակի

¹³ Նույն տեղում, էջ 70:

¹⁴ Նույն տեղում, էջ 109:

¹⁵ Տե՛ս Рзакулizada С. Д., նշվ. աշխ, էջ 41:

¹⁶ Տե՛ս Хагани Ширвани. Избранные произведения. Баку, 1951, էջ 16:

մեջ արթնացնում է կյանքի անցողիկ և ունայն լինելու մասին մտքեր, քանի որ ժամանակին լինելով ուրախության, խրախճանքների ու տոնակատարությունների կենտրոն՝ քաղաքը XII դարում վերածվել էր խղճուկ ավերակների:

Խաքանիի «Երկու Իրաքների նվերը» երկն ըստ էության հուշագրական, մասնավորապես՝ սաֆար-նամեի ժանրին պատկանող ստեղծագործություն է, որը թեև ժամանակի գեղագիտական ընկալումների թելադրանքով գրվել է չափածո, սակայն բոլոր չափանիշներով համապատասխանում է հիշյալ ժանրի պահանջներին:

Մ. Ի. Ջանդը «Փառքի վեց դարերը» աշխատության մեջ գրում է. «Դա պարսկերեն գրված առաջին չափածո ուղեգրությունն է և, հավանաբար, մեզ հասած միակ գործը, եթե, իհարկե, հաշվի չառնենք տաղանդով դրան զգալիորեն զիջող, Ադրբեջան և Յյուսիսային Իրան կատարած ճամփորդության մասին Նիզարի Քուհիսթանիի «Սաֆար-նամե» պոեմը»¹⁷:

АРМИНЕ МАРТИРОСЯН – Хагани Ширвани как продолжатель традиций жанра путешествий в персидской литературе. – В статье рассматривается одно из основных произведений великого поэта XII века Хагани Ширвани – «Тохфат ал-Ирагеин», развивающее жанр путевых заметок в средневековой персидской литературе. В статье изложены причины и цели, побудившие создать это произведение, его жанровые и языковые особенности, значение и влияние на последующие персидские сочинения мемуарного характера. Книга являет собой первое в персидской литературе поэтическое описание путешествий, отмеченное сравнительно простым языком; по всем основным признакам оно относится к жанру путевых заметок и содержит большой автобиографический материал.

ARMINE MARTIROSYAN – Khaghani Shirvani as the Continuator of the Travel Genre Tradition in Persian Literature. – The article deals with one of the major works of the great Persian poet of XII century Khaghani Shirvani "Tohfat al Irageyn" which continues the tradition of the "travel writing" genre in medieval Persian literature. The author of the article describes the reasons and the purposes of writing the work, its genre and linguistic characteristics, significance and impact on further development of the Persian memoir literature. This is the first poetic description written by a relatively simple language of travels in Persian literature on all the main features related to the genre of travel writing and contains a great autobiographical material.

¹⁷ Занд М. И. Шесть веков славы. М., 1964, с. 134.